

ՀԵՉՉԱԿ

ՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սով կայ Հայաստանում: Վերջին 10-15 տարւայ ընթացքում այդ երեւոյթն արդէն հինգերորդ անգամըն է կրկնվում թէ մասնակի և թէ ընդհանուր կերպով: Ուրեմն, նա պատահական չէ: Աւելի եւս, երեւան է գալիս նա պարբերաբար, նա սխառեմական է, նա բըրօնիկական է: Սովն այլ ևս կաղմում է տաճկահայ ժողովրդի կեանքի, կարծես, մէկ անհրաժեշտ պարագան, մասն ու բաժինը: Կերկայումս նա սպառնական կերպարանք է սկսել ստանալ Վարնոյ նահանգում: Մէկ ուրիշ վարակիչ ախտի՝ խօլերայի՝ նման, որ կոտորում է անում նոյն այդ նահանգում, սովն էլ սկսել է երեւան գալ Մշոյ, Բաղշի ու Վանի կողմերը: Վարակված տեղերի վիճակը ծանր է. նիւթապէս ժողովուրդն այնքան ընկած է, որ մինչեւ իսկ թիւրք կառավարութիւնը մըտածում է, թէ ինչպէս ժողովէ հարկերը, քանի որ գիւղացին վճարելու ոչինչ չունի: Յորենի գինը բարձրանում է շարունակ և անասելի համեմատութեամբ: Մի քիւլէ ցորենը, որ Մշոյ կողմերն առաջ արժէր 20-30 զրուշ, այժմ 100 զրուշ է. սեւ գլխիլի ամենաստոր տեղի, որ հացի է ուտվում, մի քիլէն առաջ արժէր 15 զրուշ, այժմ 50 զրուշ է: Սովը դեռ նոր ըսկած լինելով, բնականաբար, մօտիկ ապագայում այդ գները կը հասնեն աներեւակայելի բարձրութեան: Միւս կողմից սկսել են զգալի կերպով պակասել ու թանկանալ անասունների ուտեստի նիւթերը: Մտառանք գիւղացիներն, արդէն գտնվելով մեծ երկիւղի տակ, դրամ են փնտռում: Հողը կայք, տուն, տեղ, նոյն իսկ սեփական անձն—ամեն բան դարձել է այլ եւս մի ծանր բեռ: Իսկ շուտով հէնց նոյն այդ հողի, կայքի մի շարք աւերիչ հարկերի հատուցման ժամանակն է գալու: Եւ ասա սովի պատճառած աղէտի վրա բարդվում է հարկաժողովի աղէտն իր բոլոր վայրենի, բռնի պայմաններով: Ո՛ւր է ելքը: Գիւղացին գիտէ մի բան.—իր դուռն արդէն սկսել է բաղնիս մահը: Գուցէ այդ է ներա միակ միտքարանքը:

Ինչ է անում թիւրք կառավարութիւնը. ինչ պէտք է անէ հայ հասարակութիւնը: Կառավարութիւնը ճշգրտում էր նախ ծածկիլ այդ երեւոյթը, բայց իրողութիւնն

արդէն յայտնապէս յանկարծ աչքի խփեց, և այժմ մեզ ուզում են հաւատացնել թէ նա, կառավարութիւնը, չը գիտենք քանի տասնեակ հազար քիլէ ցորեն է համայն և Վարնոյ նահանգը հասցնելը Մեզ ուզում են նմանապէս հաւատացնել, թէ նա հրամայել է Տրապիզոնի կուսակալութեան ևս մի քանի հազար զրուշ հասցնել Վարնոյ կուսակալութեան: Գուցէ կառավարութիւնը շարունակէ դեռ մի շարք նորանոր հրամաններ էլ տալ իր ծակ սնդուկից զրամներ հանելու: Մենք չենք տարակուսում, որ այդ հրամանները հրամաններ էլ կը մընան ընդհանրապէս: Բայց հարցը դրանում չէ: Իսկ հայ հասարակութիւնը: Որ այս վերջինը չի զանալ իր ձեռքից եկածն անել նիւթական օգնութիւն հասցնելու համար սովեւելներին—դրան կարող են գրաւական լինել նոյնօրինակ նախընթաց առիթները: Որ այդ օգնութիւնները, որքան էլ մեծ լինեն նրանք, չեն կարող ընդհանուր կերպով թշուառութիւնների առաջն առնել—դա էլ հասկանալի է: Բայց կայ մի հարց.—ինչ նշանակութիւն ունեն բարեգործական, մարդասիրական ուղորմութեան այդ լուծանքը, քանի որ պայմանները պահանջում են մաքառումն ո՛չ թէ մի պատահական, այլ մի սխառեմական, բրօնիկական երեւոյթի դէմ: Այդ աղէտը—դրա յաճախակի կրկնութիւններն անհերքելի ապացոյց են—դարձել է այլ ևս տաճկահայ ժողովրդի օրգանական մի հիւանդութիւն: Հասարակութեան կողմից արված նիւթական օգնութիւններն այդ հիւանդութեան համար լոկ պալիատիվ միջոց է, ցաւը լոկ ժամանակաւորապէս դարմանող է, մինչդեռ ինքը ցաւը բրօնիկական լինելով, պահանջում է էական օգնութիւն, պահանջում է արմատական դարման:

Հետեւանքների, ազդեցութեան դէմ մաքառելու և դրանց վերացնելու համար՝ նախ պէտք է իմանալ հետադատել պատճառները և այնուհետեւ՝ պատճառների ներքին բնութեան համեմատ՝ որոշել, թէ ինչ միջոցներ կարող են ծառայել նպատակին: Արդ, որո՞նք են սովի պատճառները Հայաստանում: Կառավարութեան լրագիրները և հայկական մամուլը միաբերան ասում ու պնդում են, թէ սովի պատճառն այս անգամ երաշտն է, բնութեան այդ կոյր խաղը: Բայց շատ վայրկեւոր քննութիւն արտօ՞ք և շատ տարրական, ինքն ըստ ինքեան ոչինչ չը բացատրող տրամաբանութեան յանգած

կը լինէինք, եթէ այդ խօսքով բաւականանայինք: Չը կայ արդեօք մէկ աւելի խորը պատճառ սովի երեւոյթի: Գրապատճառներն արդեօք չեն գտնուում ժողովրդի նոյն իսկ տնտեսական կացութեան ներկայ պայմանների մէջ: Գիտենք աւելի մօտիկից և աւելի խորը կերպով:

Այսօր հողը Հայաստանում գիւղացու համար դարձել է մէկ իսկական բեռ, լինի նա, այդ հողը, Գիւղացու սեփականութիւն, լինի նա կապալով վերցրած խոշոր հողատէրերից: Այսօր այնպիսի պայմաններ են առաջացել, որ հողի մշակութիւնից գիւղացին չէ կարողանում ձեռք բերել ոչ մի շահ: Ներկայումս շարունակ աւելի ու աւելի է ընդարձակվում և արդէն ընդունում է մէկ ընդհանուր կերպարանք այն երեւոյթը, որ գիւղացիները չեն մշակում իրանց ձեռքի տակ եղած հողի ամբողջն, այլ մշակում են լոկ այնքան, որքան անհրաժեշտ է իրանց և իրանց գերդաստան տարեկան պէտքերին: Այդ երեւոյթն առաջացած է նրանից, որ հողագործական արդիւնքների սեփական, իրանց գործածութեան համար յատկացված քանակութիւնից աւելին գիւղացիներն անկարող են վաճառ հանել, որով էլ արդիւնքների այդ աւելին գատապարտված է մնալ ընկած ու փակել: Վաճառելու միջոցներ չունենալով, գիւղացին էլ բաւականանում է մշակել հողը միայն սեփական պէտքերի պահանջի չափով: Երկրում գոյութիւն չունենալով վաճառանոցներ, ուր գիւղացին կարողանար բերել իր հողագործական արդիւնքները, գոյութիւն չունենալով նոյնպէս հաղորդակցութեան (խճուղիներ, երկաթուղի և այլն) միջոցներ, որով կարելի լինէր ապրանքը մեծ քանակութեամբ փոխադրել մի վայրից միւս վայր, կամ արտահանել, — գիւղացու համար արդէն աւելորդ է յայտնվում իր և իր գերդաստանի գործածութեան համար հարկաւոր քանակութիւնից աւելին արդիւնաբերել, աւելին, որ կարող էր միայն յատկացվել վաճառքի: Աւելացրէք դրա վրա և այն, որ գիւղացին արդէն մեծ գրգռութիւնների է հաղկվում նոյն իսկ իր սեփական գործածութեան համար արդիւնաբերած հողային բերքերի ծանր հարկերի վճարման մէջ՝ մի շարք ուրիշ հարկերի հետ միասին, և այդ պարագայում նրան արդէն միանգամայն վնասաբեր է մեծ քանակութեամբ արդիւնաբերել և փակել գատապարտված արդիւնքների համար էլ հարկ վճարել: Այդպիսով ընկնում է մի կողմից հողագործական արդիւնաբերութիւնը, նուազում է առհասարակ դրա արդիւնքների քանակութիւնը և, հետեւաբար, նուազում է այդ քանակութիւնը գլխաւորապէս գիւղական ժողովրդի մէջ, և միւս կողմից՝ դրամի չը գոյութիւնը գիւղացու մօտ, ըստ որում նա անվճար և ի պարտքերի տակն է ծովում՝ շնորհով կողոպտող, նրա տան, նրա հողի, կայքի գող վաշխառուի: Եւ ահա այդ հանգամանքներում բնութեան մէկ

անկաստ կոյր խաղ — և հաղարարներ գիւղական ժողովրդից փուլում են գետնի վրա, օրերով բաղցած, հիւանդ, մերկ, սովից կատաղած, պատրաստ միմեանց պատառելու և ի վերջոյ շարտվում են անխուսափելի մահ: Հի ճիւղանները: Ներկայ տնտեսական պայմաններն իրանք են պատրաստում այդ աղէտը, որի չեղած ժամանակն իսկ վաշխառուի շնորհով սեփականադուրի դարձած՝ գիւղացին պանդխտում է խուսափելու համար իր մշտական սովից, որը ներկայ համաճարակ սովից տարբերվում է նրանով, որ միայն կամաց-կամաց քայքայող մահացնող սով է: Խնդիրը գոյութեան խնդիր է: Գիւղատնտեսական արդիւնաբերութեան աւերիչ պայմանները, այդ արդիւնաբերութեան անկած վիճակը, գիւղական ժողովրդի իր յոյժերից բարձր պարտքերի տակ ընկած լինելը, տէրութեան ֆինանսական ու հարկային սիստեմը, տիրող եղանակն — ահա հայ ժողովրդի մէջ առաջած սովի բուն պատճառները:

Հարցն այժմ արդէն պարզ է. պէտք է վերացնեն եւ այդ պատճառները, որպէս զի ական էլ վերացվէ հայ ժողովրդի օրգանիզմից, որպէս զի նախագիւղացիներն նրա յաճախակի պտրբերական կրկնութիւնները: 1) Հարկային ներկայ սիստեմի վերացումն և հաստատումն հարկային առաջադիմող սիստեմի. 2) անուղղակի հարկերի ոչնչացում. 3) գիւղացուն ազատել ամեն տեսակ պարտքերից. 4) համայնքի կամ կառավարութեան օգնութեամբ ներմուծել հողի մշակութեան մեքենայական սիստեմ, ըստ որում այդ մեքենաները դարձնել սեփականութիւն համայնքի. 5) կալմութիւն համայնական հողագործական ընկերութեան, որի նպատակը պէտք է լինի հողագործական արդիւնքների վաճառումն և սերմ, հունտ, պարարտութեան նիւթ և այլն գնելը. 6) խոշոր կալուածատէր այն հողերը, որոնք մշակում են գիւղացիները, — համայնքի սեփականութիւն. 7) հաղորդակցութեան բոլոր միջոցների հաստատումն և այլն — ահա մի շարք միջոցները, որոնց գործադրութիւնը միայն կարող է ազատել հայ աշխատաւոր ժողովրդին անտանելի, աղէտալի վիճակից ներկայումս, որպէս նաև նախագիւղացիները սովի դէպքերը և միանգամայն վերականգնել տնտեսական դրութիւնը, նպաստել ժողովրդի զարգացման:

Ասել այդ, սակայն, նշանակում է ասել թէ հիմնովին, արմատականապէս յեղափոխել ներկայ տնտեսական, հասարակական ու բաղադրական կարգերը Հայաստանում, միանգամայն ընդմիջող վերջ տալ այդ քայքայիչ մահացնող, փտած կարգերին, յարաբերութիւններին, որոնք այլ եւս ամեն-մի քայլափոխում արգելք են հանգիստնում հայ աշխատաւոր ժողովրդի կենսական բոլոր պայմանների զարգացման և տանում են նրան դէպի կոբուստ: Այո, մեր խօսքն այդ է նշանակում, դա է միակ եւլքը՝ համաձայն իրերի վիճակին: Յեղափոխել վերջից

կարգերը, վերջ տալ նրանց և հաստատել այն տեսակ. քաղաքական-հասարակական հաստատութիւններ, որոնք անհրաժեշտ ու միակ պայմանն են հայ աշխատաւոր ժողովրդի ներկայ տնտեսական յարաբերութիւններից ծագած բնական պահանջների իրագործման համար—ահա միակ պատմական միջոցը, որ հայ ժողովրդին կը փրկէ կորուստից և կը բանայ նրա առջեւ նրա զարգացման ուղին:

Թիւրքական ներկայ քաղաքական ու սոցիալ-տնտեսական կարգերի, բէժիմի մահը—դրանումն է հայ ժողովրդի փրկութիւնը:

Թ. Գ. Թ. Ա. Վ. Յ. ՈՒԹ. Ի. Ի. Ն. Ն. Ե. Բ.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏՅՈՒՆՆԵՐ.

Կ. Պոլիս, 12 յունուար 1893.

Հայաստանի ամեն կողմերէն սատարիկ հալածման դանդաղանքը անցեալ տարուայ վերջերը բաւական բազմացեր, շատացեր էին եւ ատոնք անհիմն չէին: Սուլթանի կառավարութիւնն որոշած լինելով «խաղաղութիւն»-ը վերականգնելու հայաբնակ գաւառներու մէջ, նա զայդ կընէ նոյն եղանակով ինչ եղանակ յատուկ է ամեն բունակալ կառավարութեան՝ որ կը հանգիստի այդպիսի պարագաներու: Լաւ զգացած լինելով ինքն իր քաղաքական խախտում վիճակը՝ նա իր բոլոր ճիշդ կը լծալի ոչնչացնելու համար այն ամեն երեւոյթները, որք կը կարծէ թէ պատճառ են իր խախտում վիճակին: Բայց միեւնոյն ժամանակ, որպէս յատուկ է ամեն քայքայուող կառավարութեան, նա իր հարուածը կուտայ երեւոյթների երեսին եւ ոչ արմատին վրայ. նա կը հալածէ մարդերը, փոխանակ իրերը կարգի բերելու պատշաճ եղանակաւ ու սկզբունքներու համաձայն: Ըսելով չունինք որ սուլթանի կառավարութիւնն ամենեւին չը փայլիր ոչ այն իմացականութեամբ եւ ոչ այն խելքով գիտութեամբ՝ որ մեր վերն ըսածը հասկնար. բայց մենք իրողութիւնը կուզենք միայն մատնանիչ ընել և պարզ է որ եթէ այդ պաշտպանութիւն խուճապ հասկնար իսկ իր ճշմարիտ անկեղծ, հեռու կըլար սակայն նորա գործադրութենէն: Ըսինք գանդատները շատ են, շատ են հալածանքներն ալ եւ արդէն անցած ըլլալով աներեւակայելի բռնութեանց շաղկին վրայ, կառավարութիւնը ոչ թէ չը ցանկանար, այլ եւ չը կրնար յետ կենալ այդ ուղիէն՝ որ կը տանի անդունդին գլուխը: Կառավարութիւնը կը մտածէ այդ անդունդը գլորել հայ ժողովուրդը, բայց կը կարծենք որ անոր խելահաս (եթէ կան) անդամները պիտի հասկնան որ ժողովուրդ մը կորստեան մատնելն այնչափ զիւրին չէ ամենահզօր ձեռքի մը համար իսկ եւ անպատիժ չանցնիր: Մեր կողմէն ալ կըլսեմք թէ իրաց վիճակը Հայաստանի մէջ ի նըպաստ հայերու կը խօսի,—այդ իրական ոյժն ամենէն արմատական, ամենէն մեծ ոյժն է, որ ժողովրդի մը ճակատագրին առաջնորդ կը հանդիսանայ: Ինչ են մարդոց ցանկութիւնք իրաց բնական տրամաբանութեան դիմաց, ըլլան այդ մարդիկ աշխարհիս մեծերն իսկ:

Գանկութիւնք՝ որ եթէ այդ տրամաբանութեան հակառակ ըլլան կանխաւ դատապարտուած են անոր աշխարհ մը, անպտուղ ճիւղ մը մնալու: Այս համոզմամբ է՝ որ մենք աւելի կամրապնդիմք մեր ձգտմանց մէջ հայ ժողովրդի բարօրութեան համար մղած պատերազմին նըկատմամբ եւ շատերու պէս չենք վհատիր տաճկի կատաղի հալածանքներէն: Արդարեւ ահաւախ կակոռցներ շատ կը լսուին հայ դատի մարտիրոսներու դէմ. ներքին լծունամիները կուզեն օգտուիլ իրենց անխառն վանկի շահերուն համար մարտիրոսաց եւ առհասարակ հայ նահատակ ժողովրդեան ներկայ կրած գժբաղդութիւններէն, բայց այնպէս չէ որ ազոր համար ալ նորա ահաւախ են ծնած, թէ եւ նոցա խօսքերէն բաւական վհատութիւն ալ յառաջ կուգայ հայերու մէջ...

Կառավարութեան խաբէբայութիւնը միշտ կը կընդնուին: Ահա քաներորդ անգամն է որ նա աւելի իրաց վիճակէն ու ժողովրդի գրգռեալ տրամադրութենէն վախցած՝ քան Եւրոպայ տէրութեանց ազդեցութենէն, յանձնախմբեր կը շինէ իր շայաստան ղեկելու եւ երկիրն վիճակը քննելու համար: Անցեալէն քանի մ'անգամ արդէն սորվեր ենք այդ յանձնախմբերի կալմութեանց ու անոնց տեղէն չը շարժելուն ախանառս լինելու: Անցեալ տարուայ վերջերն ալ այդպիսի յանձնախմբի մը կազմութեան ձեռնարկեց եւ վերջն անցաւ Եւրոպայէն մէջ լծալու կառավարութիւնը: Այդ յանձնախմբերը կը նմանին այն սառնէ գնդակներուն՝ որոցմով մանկալիք կը դուարձանան. տալաւին բաւական չը մեծցած մանկան շունչէն՝ նա կը պայթի օդին մէջ եւ կանհետանայ: Հեքնական այն է որ այդ յանձնախմբի կազմութիւն կուտած կատակերգութեան ատեններն իսկ կառավարութիւնը յեղափոխականաց դէմ տրակ օնեան խիստ օրէնքներ կը հիմնէր *), կը կատարէր ձեռքադրութիւնք եւ այստեղ մայրաքաղաքիս մէջ 13 անձերու դատաւարութիւն մը տեղի կուենար, որք կամբաստանուէին թէ իրր շնչակեան մարմնոյն հետ կապ ունին եղեր: Անասելի կատաղութեամբ կառավարութեան դատաւորները կորոնէին փաստ մը, նշոյլ մը, հետք մը, ակնարկ մը անոնց մեղաց, բայց ամեն ջանք ի դերեւ անցաւ: Կառավարութեան միջոցին ամբաստանեալք յոյժ գովելի ընթացք մը ունեցան՝ պաղարիւն, ինքնավստահ, խելացի պատասխաններով եւ համարձակ, ուղղամիտ վարմունքով. դատաւորներէն մին ինք խոստովանած է այդ: Աւ. ահա Հայաստանի ժողովրդի խաղաղութիւնն ցանկացող եւ իբրք անոր բարօրութեան համար յանձնախմբեր լծող կառավարութիւնը, լրաններու լոկ ամենաթեթեւ զօրոյցներու վրա՝ 13 անձերէն մին, Կարապետ Թառնը՝ Սարգսեանը, ի բացակայութեան, կը դատապարտէ 15 տարի բերդարկելութեան. Էվէրէքի զեղադործ Սարգիս Թորոսեանը 8 տարի շղթայակալ աշխատութեան. իրաւադիտութեան ուսանող Գալուստ Բեթլէհեմեան, վանցի Յովհաննէս, զինադործ տերջանցի Աբրահամ եւ Էվէրէքի կոչակար Գրիգոր՝ 5-ական տարի բերդարկելութեան. կրկին Էվէրէքի հաճի Գրիգոր եւ ատոր արհեստակից

*) Տես «Հնչակ» № 8, 1892 թ.

կրկին նոյն տեղացի Յակոբ Թաշգափա՛ն Է-ն 4-ական տարի բերդարգելութեան, եւ միայն մնացեալ Տինգ հողին են համարած իբրեւ անմեղ եւ անպարտ արձակած. առոնք են՝ Պետրոս Փարեան, Կարապետ 2 ալեան՝ ուսանողք, հողաթափ վաճառող Պողոս Տէլ-Ավարիքեան, սեղանաւորի աշկերտ Մաթէոս Խաչատուրեան եւ կօշկակար Սեդրակ Գամպաղեան: Այս դատաւարութեան մասին տեղական լրագրիներուն գրել արգիլեալ էր:

Աջգեանը, որ այդ ամբաստանեալներուն ի վնաս սեւ զեր մը խաղացած էր, ճիշդ այդ դատաւարութեան վախճանէն ետքը հրատարակեց իր նշանաւոր կոնդակը, որ անշուշտ հայ պատմութեան էջերին մէջ պիտի... փառաւոր տեղ բռնէ... Ա՛հ, երեւելին, մեծն Աջգեան, որչափ խորագէտ, որչափ իմաստուն... Ձէ իրօք՝ մեր հոգեւորականութեան արժանաւոր ներկայացուցիչն է նոյն, մարմնացեալ տիպար նորա — կարճ խելք, նեղ սիրտ, տգէտ միտք, վարագոյրներու ետեւը գործող, տրամադիր ամեն կեղտոտ ու անարժան ձեռնարկութեանց գործողորդ ըլլալ կոյր գործիք անոնց որոցմէ իր շահը կայ, բծնող անոնց առջեւ որք իրմէ հզօր են, կեղծաւորութեան անպաճոյճ հիւսուածք մը, նախապաշարութեան սարգոստայնի զոհ մը... Այդ օրինակելի վերարաւորին կոնդակի մասին իր ժամանակին ձեռք իմացուցիւք *): Արդէն ինքն կոնդակն այնքան կը նպաստէ յեղափոխականաց, որ այդ տեսակ կոնդակներու դէմ գանգատիլ անգամ աւելորդ կը համարինք: Այլ եւ կը խրախուսենք մեր սրբազանին շարունակել նոյն կերպով... Նա մեղ կանխէ, նա մեղ կրօնքէ դուրս կը հանէ, բայց ինչ նշանակութիւն ունին կրօնական անէծքն ու կրօնքէ դուրս ըլլալն այն մարդոց համար որք անխիճուելու վիճակի մէջ չեն գտնուիր, որք կրօնական անէծքը հնազարեան նախապաշարութեամբ կը համարեն, որք կրօնքի համար չէ որ կապրին, կը կուտին, կը գործեն, կը մեռնին: Այդ օրինակ պառակտական արարողութիւնք գլխին մէջ միտք ունեցող մարդու անչափ ծիծաղի եւ արհամարհական ծաղրի պատճառ կը ըլլան... Նա ժողովուրդը կը զգուշացնէ տալով մեղմէ անուններ, — թէ եւ այդ անուններու շարքին մէջ սպրդած են այնպիսիք եւս որ անարժան են մինչեւ իսկ քո անէծքին, ով Աջգեան, — բայց ինչ միթէ չը գիտեր որ ճիշդ իր ուղածին հակառակ զգացումը ներշնչած պիտի ըլլայ տառապող ժողովուրդին մէջ դէպի մեղ... Թող շարունակէ Աջգեան իր պատրիարքական ջերմ գործունէութիւնը, շարունակէ նոյն եղանակաւ, ինչպէս մինչեւ ցարդ. այդ կը ծառայէ ի նպաստ մեզ՝ յառաջագէտ յեղափոխականաց, ի նպաստ հայկական դատին, որովհետեւ հոգեւորականութենէն, իբրեւ հոստարակութեան յայտնի դասէն, ժողովուրդը երբեք օգուտ մը չէ ունեցած բացի վնասէն: Որքան շուտ ընկնէ ժողովուրդեան աչքէն հոգեւորական դասն, այնքան աւելի վնասեալ կը ըլլայ մեր դաղափարը, այնքան ալ աւելի վնասեալ կը ըլլայ ժողովուրդը, ըստ որում այդ ալ ժողովուրդի կեանքի զարգացման հետ մեկտեղ կը նպաստէ նորա աղատման հոգեւորականութեան

ապականիչ, խուարապաշտական, անբարոյականացուցիչ, խեղդող լուծէն: Հետեւաբար այնքան ալ աւելի կը վնաս տրկէ հայոց դատը, որոյ պատերազմի դաշտին մէջ եղած քանի մը հոգեւորական անհատները բացառութիւն կը կալմեն, զի առոնք այնքան հոգեւորական չեն, որքան մարդ՝ մարդկային զգացումով եւ ժողովուրդային դատի նկատմամբ կրօնական դիտումներէ զերծ, միայն ժողովուրդեան շահին վրայ մտածող: Թող Աջգեանն իր ընթացքով խայտառակէ հոգեւորական դասն եւ ասոր հետ մէկտեղ հոգեւորականութեան մարքի ծնունդ ամեն նախապաշարութեամբ, ամեն հինգած գաղափար, ամբողջ շէնքը, որոյ վերջնական անկման ալ ապագային կը նպաստեն իրենն եւ ապագայի կեանքը: Ժողովուրդեան լուսաւորութեամբ պիտի լինի այդ օրը:

Աջգեանի կարգալուծ ըրած Նար-Պէյի մահն ալ մասամբ ազգային դէպք մը հանդիսացաւ շնորհիւ նորա բարեկամ լրագրութեան ու այն պարագաներուն որոց մէջ նա վախճանեցաւ: Ձեռք ուղեր մանրամասնօրէն առաջ բերել այն ինչ յայտնի է. Նար-Պէյի մեռաւ յանկարծակի, անսպասելի կերպիւ եւ նոյն իսկ այն ատենները, երբ կառավարութիւնը անոր վրայ կը կասկածէր: Կանչուած ըլլալով Բ. Դուռը՝ Նար-Պէյը կը վերադառնայ տուն եւ շուտով կը մեռնի... Կասկածներ եղան թէ թունաւորուած է եղեր... Հաստատել չենք կրնար, թէ եւ ժողովուրդեան մէջ այդ պլ եւս համոզում մը դարձած է:

Մեռաւ եւս Գարեգին եպ. Սրբուհի Դանիէլ, որ յայտնի է իր ժողովածուններով դաւառաբնակ հայ ժողովուրդի առակներէն, զընցներէն, ասացուածներէն եւ այլն: Այդ ժողովածունները դեղեցիկ նիւթ են հայ ժողովուրդեան մտաւոր ու բարոյական արդեանց քննութեան համար... Թէ ասոր եւ թէ Նար-Պէյի վերաբերութիւնը դէպի հայկական յեղափոխութիւնը եղած է բացասական:

Աւարտելով նամակս՝ կը հաղորդեմ ձեզ որ մեր ազգային ժողովն ալ ժամանակ առ ժամանակ կեանքի նշոյլ ցոյց կուտայ, թէ եւ անոր կեանքն ալ իր արտայայտութեանց մէջ անոր մահէն տարբերութիւն մը չունի: Մեր սահմանադրութիւնն ալ թաղվեցաւ անցեալ տարեդարձին օրը: Ամիրաներու ու մեր պօլսահայ ուսուցիչ-ընկերու այդ դուրգուրած զաւակն ալ մեռաւ ազգային ժողովին հետ մէկտեղ: Հանգիստ ըլլայ անոնց... Հին պէտքը չունինք... Չգտնենք, աշխատենք ձեռք բերել նոր քաղաքական կացութիւն մը՝ միայն արմատականապէս տարբեր հինէն եւ համեմատ ներկայ ժամանակուան ոգւոյն ու ձգտմանց:

ԿԱՅԻՆ:

ՀԱՅԵՐՆ ԸՄԵՐԻՎԱՅԻՆՈՒ

(Հարունակութիւն 1892 թ. № 12-ից եւ վերջ)

II

Մեր սոյն գրութեան նախորդ գլխում խօսեցինք ամերիկայեան հայերի ստուար մեծամասնութեան, այն է՝ բանւորների մասին միայն նրանց բանւորական

*) Տես «Հնչակ» № 11, 1892 թ.

շահերի տեսակետից: Մենք խօսեցինք նաեւ այն հանգամանքի վրա, որ ներկայ քաղաքակրթութեան երկրներում բանւորական շահերը, արդիւնաբերութեան ոյժերի զարգացման ու նրա կերպերի շնորհով կատարելապէս համապատասխան են մարդկութեան յետագայ զարգացման ձգտումներին, նրա ընդհանուր բարօրութեան պահանջներին: Աւելի ճիշդ ասելով, ոչ թէ համապատասխան են, այլ հենց բանւորական շահերն են, հենց բանւոր դասակարգի ձգտումներն են, որ ներկայումս յայտնվում են մարդկային հասարակութեան յետագայ զարգացման եւ ընդհանուր բարօրութեան պատմական արտայայտութիւնը: Այն կերպերի զօրութեամբ, որոնց մէջ գնալով աւելի ու աւելի է ամփոփվում արդիւնաբերութիւնը, ուրիշ խօսքով՝ շնորհով այն հաւաքական, համայնական կերպերի, որ աւելի ու աւելի մոտեցնեն գործում արդիւնաբերութեան ամեն ճիշդագոյն միջոց աճող ուժով քայքայելով արդիւնաբերական զանազան ձիւղերի անհատական-ձեռագործ կերպերը, բանւորների դասական արգելափակումն այդ բնական եղանակով հանդիսանում են ձգտումներ դէպի ընդհանուր եղբայրութիւն, ընդհանուր հաւասարութիւն: Արդիւնաբերող դասակարգի դրօշակի վրա, այդպիսով, եղբայրութեան, հաւասարութեան, ճշմարիտ ազատութեան նշանաբանը չէ հանդիսանում իրերեւելիքական, աննիւթ ու լոկ բարոյական պարտականութեան մի ձիւղ ինչպէս էին այդ խօսքերը Փրանսիական Մեծ Յեղափոխութիւնն անողի ու նրա հերոսի—բուրժուազիայի, կապիտալիստ դասակարգի—դրօշակի վրա: Փրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ այն ձիւն իսկապէս արբեցուցիչ աղաղակն էր մի վերացական գաղափարի, որին ոչ միայն չէր համապատասխանում այն ժամանակեայ տնտեսական—մարդկային հանրակեցութեան այդ հիմքի—պատմական ընթացքը, այլ եւ այդ ընթացքն ուղղակի նրա հակառակը պետք է տուածացնէր մարդկային հասարակութեան մէջ: Այսինքն նա առաջացրեց այն, ինչ տեսնում ենք ներկայ իրականութեան մէջ.—երկու մեծ դասակարգ, ծայրապէս իրար հակառակ շահերով, մշտական հակառակութեան, անտագոնիզմի մէջ, մէկն իշխող, միւսը ստորով, մէկը սեփականատէր, կապիտալիստ, միւսն սղաքատ ու զուրկ ամեն սեփականութիւնից, մէկն անգործ, ապրող ու վայելող ուրիշ տշխատանքով, միւսն ապրելու համար ստիպված ծախել իր երկու ձեռքը, իր բանող ոյժը եւ աշխարհիս ամբողջ հարստութիւնների միակ արդիւնաբերող: Այդ երկու դասակարգն են բուրժուազիական դասակարգն ու բանւոր դասակարգը: Առաջինը ներկայացնող անցեալի փառքը, անցեալի առաջադիմութեան կարապետը, ներկայումս իր պատմական դերը կատարած վերջացած, մարդկութեան յետագայ զարգացման արգէն փնտաւեր ու արգելք, ինքը քայքայվող ու մեռնող երկրորդը ներկայացնող ապագայի փառքը, ներկայի առաջադիմութեան կարապետը, որի պատմական դերը միայն նոր է սկսել, որի բնական ձգտումները՝ համապատասխան իրերի ընթացքին ու ծագած դրանից՝ մարդկութեան առջեւ բանում են կեանքի նորանոր հորիզոններ, ինքը միշտ աճող ու

զօրացող: Եւ այդ վերջինի դրօշակի վրա ազատութիւն, եղբայրութիւն ու հաւասարութիւն նշանաբանն այլ եւս այն առաջին դասակարգի վերացական խօսքերը չեն, ասում ենք, այլ արդիւնաբերութեան նոր կերպերի զարգացման հաւատարիմ արտայայտութիւն, որ իր մէջ կրում է մարդկային հասարակութեան կեանքի ճշմարտութեան եւ ընդհանուր բարօրութեան գաղափարը: Մինչդեռ բուրժուազիական դասակարգի շրջներում Փրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ այդ գաղափարը միայն վերացական էր եւ հակառակ իրերի պատմական ընթացքին, ներկայումս բանւոր դասակարգի շրջներում նա մատուցում է իր ստանդարտն (նիւթական) է եւ ինքը բնական արտայայտութիւնն է ներկայ ժամանակիս իրերի պատմական ընթացքի:

Փրանսիական Մեծ Յեղափոխութեան միջոցին ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան գաղափարը բուրժուազիայի շրջներում արձագանգն էր 18-րդ դարու Փրանսիական միլիտանտների մարդասիրական մեծ գաղափարների: Այդ գաղափարներն այն ժամանակ տեսական բողոքներն էին առաջական կարգերի դէմ, որոնք այլ եւս քայքայվում, ճայթում էին, իրանց արգանդից առաջացրած լինելով կերպարանափոխութիւն արդիւնաբերութեան եղանակների մէջ: Արդիւնաբերութեան միջոցն այն ժամանակ եղած միջոցները սկսել էին աւելի ու աւելի ընդարձակ ծաւալով կենտրոնանալ առանձին անհատների ձեռքը, առաջացնելով մանուֆակտուրան ու մեծ արհեստանոցները: Արդիւնաբերութեան արդիւնները, որ միջոցն այդ ժամանակները լոկ կամ առաջնապէս անհատական արդիւնաբերողի սեփական կամ նրա նեղ շրջանի գործածութեան համար էին ծառայում, ընդունում են կապիտալիստի ձեռքի տակ ապրանքի կերպարանը, ապրանք, որ շինվում է արդէն ծախսելու համար: Այդպիսով առանձին անհատներին պատկանող արդիւնաբերական միջոցները դառնում են հասարակական, բայց դառնալով հասարակական, նրանք կրկին պահպանում են փոխանակութեան ու արդիւնների իւրացման նախկին անհատական կերպը: Առաջնապէս է ապա մրցութիւնը կապիտալիստների մէջ, ըստ որում նիւթապէս ուժեղը ձգնում է քայքայել նիւթապէս աւելի տկարին եւ իր ձեռքի տակ հաւաքել արդիւնաբերական աւելի ու աւելի շատ միջոցներ: Եւ այն է գալիս այդ ժամանակ նոր դասակարգ՝ պրօլետարիատ, վարձու բանող դասակարգը, որ կալված է լինում նախկին արհեստաւորներից ու գիւղացիներից, որոնք մրցութեան մէջ զոհվել էին ամեն սեփականութիւնից: Պրօլետարիատ դասակարգի ծաւալն ընդարձակվում է եւ ի վերջոյ առաջացնում իր միջոց «բանւորական պահեստի զօրքը»: Եւ ահա այդպիսի պոտովական բուրժուազիական բուրժուազիական կապիտալիստ դասակարգի շրջներից ազատութեան, եղբայրութեան ու հաւասարութեան գաղափարը, որ դատապարտված էր յայտնվելու վերացական, աննիւթ, մտացածին, որովհետեւ չէր հիմնված կեանքի իրական պայմանների վրա, որովհետեւ հակառակ էր մարդկանց այն ժամանակեայ հասարակական-տնտեսական յարաբերութիւններին: Այն գաղափարը դա-

տապարտված էր յայտնվելու լոկ վերացական, որովհետև
սուե բուրժուազիայի պատմական ձգտումն առաջ էր բե-
րել խորին հակասութիւն սեփականատիրութեան կերպի
եւ արդիւնաբերութեան միջոցների կերպարանքի մէջ —
առաջինը պահպանելով իր նախկին անհատական ձեւի
մէջ, մինչդեռ երկրորդին տալով հասարակական կերպա-
րանք: Այն դադարիւրը դատապարտված էր լոկ վերա-
ցական յայտնվելու, որովհետեւ իր Նեմ Զեղափոխու-
թեամբ բուրժուազիայի հասակարգն, իր ձեռքն ունենալով
նիւթական իշխանութիւնը, իսկապէս ձգտում էր նոյն
իր ձեռքը դրել նաեւ քաղաքական իշխանութիւնը,
նրա ղեկը, գահնալ իշխող դասակարգ, մինչդեռ միւս
կողմից նոյն իր այդ ձգտումը ծնունդ էր տալիս մարդ-
կանց մէջ ամենախիստ անհասարակութեան, չեղբայրու-
թեան, որ տեսնում ենք այժմ: Իսկ աղատութեան նրա
նշանաբանը վերաբերում էր միայն քաղաքական աղա-
տութեան, որից էլ գլխաւորապէս ու առաջնապէս օգ-
տւում էր ինքը, մինչդեռ իրապէս — տնտեսապէս — ճոր-
տութեան մէջ էր մշտնապէս ժողովրդի աւելի ու աւելի
մեծ մասը:

Պրանսիական Մեծ Զեղափոխութեան միջոցին ա-
ռաջագէտ ու յեղափոխիչ էին բուրժուազիայի հասակարգի
ձգտումները, որովհետեւ այդ ձգտումները
բնական արտայայտութիւնն էին արդիւնաբերութեան այն
ժամանակեայ կերպարանափոխման, որ, կատարելագործ-
ված կերպերի եւ այդ կերպարանափոխութեան շնորհիւ
ծնունդ առած նոր աշխարհահայեացքի: Բուրժուա-
զիան պատմական արամաբանութեամբ ձգտում էր վերջ-
նական հարուածը տալ այն ամբողջ շէնքին, այսինքն ա-
ւատական կարգերին, որ արդէն իրապէս քայքայված ու
աւելորդ էր դարձած եւ այլ եւս խոշորոտ էր մարդ-
կութեան զարգացման համար: Կերկայումս — Պրանսիա-
կան Մեծ Զեղափոխութիւնից մի դար վերջ — նոյն պատ-
մական արամաբանութեամբ բանւոր, պրոլետարիատ դա-
սակարգն է յայտնվում յեղափոխիչ եւ բուրժուազի-
այի ձգտելով ձեռք դրել քաղաքական իշխանութիւնը՝
կործանելու համար ներկայ հասարակական կարգերը եւ
հաստատելու նորերը, դասակարգային իշխա-
նութիւն չէ, որ նա կարող է հաստատել ինչպէս բուր-
ժուազիան արեւ: Որովհետեւ նա չորրորդ, վերջին ու
ամենամեծ դասակարգն է, որ զուրկ է ամեն նիւթական
սեփականութիւնից, որից աւելի ստոր դասակարգ մարդ-
կութեան մէջ այլ եւս չէ կարող լինել եւ որի յաղ-
թանակը կը լինի արդէն իրապէս ամբողջ մարդկու-
թեան յաղթանակը: Արդիւնաբերութեան միջոցները, որ
հասարակական բնութեւնութեան վերածվեցան բուրժու-
ազիայի իշխանութեան միջոցին, բայց մնացին միշտ ան-
հատական սեփականութեան կերպի տալիս այդպիսի
սով իրական հակասութեան մէջ ընկնելով պրոլետա-
րիատը կը դարձնէ հասարակական, հաւա-
քական, սօցիալիստական սեփականութեան
թիւն հաւասարապէս եւ այդ միջոցների արդիւն-
ներն էլ նմանապէս: Պրոլետարիատի յաղթանակը կը
լինի այդպիսով մարդկութեան իսկական աղատութեան,

եղբայրութեան, հաւասարութեան, ուրեմն եւ ճշմար-
տութեան յաղթանակը:

Վերեւ ասացինք, թէ բանւոր դասակարգի ձգտումնե-
րը բնական արտայայտութիւնն են ժամանակիս իրերի պատ-
մական ընթացքի եւ թէ այդ ձգտումներն իրանց ներ-
քին իմաստի մէջ ունեն մարդկութեան կեանքի աղա-
տութեան, հաւասարութեան ու ճշմարտութեան դադա-
րիւրը եւ ոչ թէ այդ դադարիւրը մտացածին, վերա-
ցական է, ինչպէս էր բուրժուազական դասակարգի ձրդ-
տումների նկատմամբ: Բայց ինչ է նշանակում, թէ բան-
ւոր դասակարգի ձգտումները բնական արտայայտութիւն
են ներկայ իրերի տրամաբանութեան: Փորք-ինչ կանգ-
առնենք այդ կէտի վրա, որի բացատրութիւնը միեւնոյն
ժամանակ կը պարզէ ու կապացուցանէ, թէ ինչու հա-
մար համայնական, սօցիալիստական կազմակերպութիւ-
նը բնական, անխուսափելի կերպով պէտք է յաջորդէ
ներկայ հասարակական կազմակերպութեան, յաջորդէ նոյն
անհրաժեշտութեամբ, որպէս հետեւանքը յաջորդում է
պատճառին:

Մարդկային կեանքի, այսպէս ասած, հիմնաքարը
տնտեսականն է, որ դրոշմութիւնը պահպանելու աղ-
բիւրն է: Ամենից առաջ պէտք է ուտել, հագնվել, ուրեմն
գրանց համար աշխատանք դործադրել, որպէսզի մար-
դիկ կարողանային իրանց մօրի առարկայ դարձնել կրօնա-
կան, փիլիսոփայական, քաղաքական պարապմունքները:
Տնտեսականը, արդիւնաբերութիւնն ունի յայտնի կերպեր,
տարբեր միմեանցից մարդկութեան զարգացման իրար յա-
ջորդող, կերպարանափոխող շրջաններում: Այդ կերպերը
սկսած են ամենատարականներից եւ անհամար դարերի
ընթացքում շարունակ զարգանալով, հասել են ներկայի
մեքենայատիպ հսկայական ծաւալին: Ահա հէնց այդ նիւ-
թական է, արդիւնաբերութեան կերպերն են, որ միշտ
կոչ են պայման հասարակութեան ամեն կող-
մի — քաղաքական, իրաւական, մասնաւոր — յարաբերու-
թիւնների: Արդիւնաբերութեան կերպերը, ստեղծելով
յայտնի յարաբերութիւններ մարդկանց մէջ, իրանց հա-
մեմատ էլ առաջացնում են քաղաքական յարաբերութիւն-
ների շէնքերը, որպէս եւ մարդկանց մասնաւոր կեն-
ցաղը: Մարդկանց աշխարհահայեացքն էլ ստանում է
այն ձեւը, կերպարանքն ու իմաստը, որոնք համապա-
տասխան են արդիւնաբերութեան յայտնի կերպերին,
պայմաններին ու դրանցից առաջացած հասարակական
ու քաղաքական յարաբերութիւններին: Երբ որ արդիւ-
նաբերութեան յայտնի կերպերը սկսում են կերպարա-
նափոխվել, ձեւակերպվել բնական զարգացման ընթաց-
քում իրանց միջից առաջացած լինելով արդիւնաբերա-
կան նոր կերպեր, այդ պրոցեսը, այդ արարողութիւնն,
այդ ընթացքը՝ համեմատվում զարգացման յայտնի աւիճանի՝
քայքայում է արդիւնաբերութեան հին կերպերի
համեմատ հաստատված հասարակական ու քաղաքական
յարաբերութիւնները եւ ստեղծում է նոր երբ՝ ար-
դիւնաբերական նոր կերպերի, նոր պայմանների հա-
մաձայն: Այդ փոփոխութիւնների հետ միատեղ փոփոխ-
վում է նաեւ մարդկանց փիլիսոփայական, հասարակա-
կան ու պատմական աշխարհահայեացքը: Այսպէս ար-
դիւնաբերութեան պայմանները լինելով հիմք հանրա-

կեցութեան պայմաններին, երբ որ իրանք զարգանալով փոփոխուում են՝ իրանց միջից իսկ բնական կերպով ստեղծված լինելով արդիւնաբերական ուրիշ ն ուր պայ- ներ, մարդկանց ամբողջ հանրակեցութեան պայմաններն էլ բնական կերպով փոփոխուում են, եւ փոփոխ- վում են արդիւնաբերական նոր պայմանների իմաստի համաձայն:

Արդիւնաբերական էլ ինչպէս միշտ, արդիւնաբերական պայ- մանները ենթարկված են շարունակ փոփոխման, կերպարա- նափոխութեան: Արդիւնաբերական շնորհով աւելի ու աւելի զար- գանալով եւ աւելի ու աւելի քայքայելով արհեստաւորա- կան, ձեռագործ արդիւնաբերութիւնը, ներկայ մեքենա- գործ արդիւնաբերութիւնն արագ կերպով անընդհատա- բար ընդգրկում է արդիւնաբերութեան բոլոր ճիւղերը եւ ինքն էլ ընդունում աւելի ու աւելի բարձր, կատարե- լագործված կերպարանք: Արդիւնաբերութեան պայման- ների կերպարանափոխութիւնն ընդունում է համա- նակա՞ն, հաւաքակա՞ն կերպեր, իր միջից ծնունդ է տալիս այդ պայմաններին, այդ կերպարանքին: Բայց մենք դիտենք արդէն, որ երբ արդիւնաբերութեան պայ- մանները՝ ստեղծելով իրանց միջից նոր պայմանների տար- բեր փոփոխում են, նրանք անպատճառ իրանց զարգաց- ման նոյն բնական տրամաբանութեամբ պահանջ են ա- ռաջացնում նաեւ մարդկային հանրակեցութեան պայման- ների կերպարանափոխութեան՝ համաձայն արդիւնաբե- րութեան նոր, ծագող պայմանների: Ուրեմն, նրանք պահանջում են ներկայ քաղաքական, հասարակական ու մասնաւոր բոլոր յարաբերութիւնների կերպարանափո- խութիւն, ըստ որում ներկայի այդ յարաբերութիւններն այլ եւս արդէ՛ք, խոչնդոտ են հանդիսանում այժմ արդիւնաբերութեան, հետեւաբար եւ մարդկային ամ- բողջ հանրակեցութեան, յետագայ զարգացման: Այսպէս, արդիւնաբերութեան այդ բնական կերպարանափոխու- թիւնն, ուրեմն, պահանջում է հանրակեցութեան հա- մա՞նակա՞ն, հաւաքակա՞ն, այլ խօսքով, սոցի- ալիստական պայմաններ, որոնք այդպիսով յայտնը- վում են բնական ժառանգանքների ներկայի հան- րակեցութեան պայմանների, որ բուրժուազական, կապի- տալիստական են: Ահա թէ ինչ գիտական հիմունքների վրա է յենվում այն միտքը, թէ սոցիալիզմի յաղթա- նակն անխուսախելի է, մի բան, որ կարող է նաեւ ա- պացուցել ու հաստատել արդիւնաբերական երկրներում առաջացած իրերի բնական ընթացքը ներկայումս:

III

Մեր մինչեւ այժմ ասածներով մենք ուղեցինք ցոյց տալ ամբիկարենակ հայ բանւորներին, թէ պատմական ըն- թացքի զօրութեամբ ինչ բնական շահեր ունեն նրանք իրրեւ բանւորներ առհասարակ իրրեւ պատ- կանող ամեն ազգերի մեծամասնութիւնից բաղկացած արդիւնաբերող դասակարգին, որն այսօր մարդկութեան յետագայ զարգացման միակ զրօշակակիրն է: Նրանց համար հէնց նոյն այդ բնական շահերը եւ առհասա- րակ բանւոր դասակարգի հասարակական ձգտումները պէտք է լինեն մեկնման կէտն (point de départ) ու

յենակէտը հայ ժողովրդային դատի վերաբերութեամբ: Հէնց այդ ձգտումներն են, որ նրանց պէտք է մշին դէպի հայ յեղափոխական ասպարէզը, տալով նրանց յե- ղափոխական գործունէութեանը ոչ զուտ ազգային իմաստ, այլ իրրեւ մի հասարակական աշխատութիւն, որ գոր- ծադրվում է հայութեան առհասարակ մարդկային զարգացման նպատակով՝ համաձայն զարգացած մարդ- կութեան կեանքի պատմական նոր հոսանքին: Հայ ժո- ղովրդի, աշխատաւոր դասակարգի համար է, որ նրանք պէտք է մշին այդ պատերազմը եւ ոչ հայութեան դրամական՝ այդ նորագոյն «ամիրայական» իմբալի համար: Եւ նրանք այդ ուղղութիւնը պէտք է տան ի- րանց յեղափոխական գործունէութեան, որը պէտք է համեմատ լինի տնտեսական իրերի եութեան, նրանց օր- դանական բնական ընթացքին: Նրանք պէտք է ձգ- տեն, որ յեղափոխութիւնը տեղի ունենայ աշխատա- ւոր ժողովրդի ձեռքով՝ աշխատաւոր ժողովրդի համար. որ այդ յեղափոխութեամբ հայ բանւոր ու գիւղացի, հայ աշխատաւոր ժողովուրդն իր շահերի տեսակէտից ձեռք բերէ տնտեսական ու քաղաքական ամեն նպաս- տաւոր պայմաններն այնքան ընդարձակ ծա- ւալով, որքան ներում է, որքան ի գոր- ծ ադրում է համար միջոցներ տա- լիս է հայկական իրական ութիւնը: Ու- թիշ խօսքով, նրանք պէտք է ձգտեն ձեռք բերել այն բոլոր քաղաքական իրաւունքները եւ բանւորների ու գիւղացիների՝ շահերը պաշտպանող տնտեսական օ- րէնսդրութիւնները, որոնք ներկայումս անհրաժեշտ են յայտնվում հայ աշխատաւոր ժողովրդի շահերի հա- մար մի կողմից եւ որոնք միւս կողմից կը տան նրան հա- սարակական հարկաւոր միջոցները՝ ձեռնարկելու բանւոր դասակարգի այն բոլոր հասարակական աշխատութիւն- ներին, որ աւելի ուշ ապագայում պէտք է վերջնակա- նապէս ազատեն նրան ամեն տեսակ լծից: Այն ժամա- նակն արդէն շնորհով արդիւնաբերող ոյժերի բնական զարգացման, որ շարունակ տեղի կունենայ աւազած Հայաստանում եւ շնորհով աշխատաւոր ժողովրդի վե- րոյիշած աշխատութիւններին՝ հնարաւոր ու անհրաժեշտ կը հանդիսանայ այլ եւս սոցիալիստական հասարակա- կան կազմակերպութեան հաստատութիւնը:

Ահա այն պրօբլէմն էր (problème, խնդիր- ները), որ հայ բանւորների առջեւ դրել են նոյն իրանց դասակարգի ու գիւղացի ժողովրդի շահերը, պրօբլէմներ, որ պատմական օրէն բնական կերպով առաջա- ցել են հայութեան կեանքում եւ որոնց նպատակայար- մար լուծում տալ կարող են միմիայն հայ բանւորները, հայ աշխատաւոր ժողովուրդը: Գրանից պարզ է, թէ իրանց պատմական այդ մեծ գերը կատարելու համար՝ որքան անհրաժեշտ է հայ բանւորների համար իրանց դասակարգային ինքնաձանաւութիւնը, որքան անհրա- ժեշտ է նրանց համար՝ ճշդաբար որոշել իրանց հա- սարակական-պատմական մեծ գերը հայ ժողովրդային դատի նկատմամբ: Իրանց դասակարգային ինքնաձանա- յութեան, իրանց հասարակական գերի որոշման համար անսպառ աղբիւր են ներկայացնում առհասարակ բոլոր արդիւնաբերական երկրների բանւոր դասակարգի սոցի-

աշխատական ձգտումները: Հետեւել ուշիմ կերպով առ-
հասարակ այդ դասակարգի ներկայ շարժման, ուսում-
նասիրել նրա ձգտումներն ու գործունէութիւնը, առ-
նել այդ գործունէութիւնից յեղափոխական, որպէս եւ
քաղաքական կրթութիւն, իւրացնել այդ դասակարգի
այն է սօցիալիստական սկզբունքները, գաղափարները, աշ-
խարհայեցացքն — ահա հայ բանւորների աշխատութիւ-
նը, որ արդէն բնական կերպով թելադրում է նոյն ի-
րանց բանւորական վիճակը եւ որ՝ իրանց գործունէու-
թեամբ հայկական հողի վրա՝ միանգամայն վճռական
դեր կ'ունենայ հայ ժողովրդային դատի ձգտումների ու
նպատակի որոշման եւ գրանց իրագործման մէջ: Հէնց
իրանց բանւորական դրութեան թելադրութեամբ իւ-
րացնելով վերոյիշած ձգտումներն ու սկզբունքները, ա-
մերիկաբնակ, որպէս եւ այլ երկրների արդիւնաբերական
քաղաքների, հայ բանւորները ներս կը բերեն հայոց
կեանքում հասարակական մի նոր տարր, մի նոր ոյժ, մի
նոր հոսանք՝ յեղափոխող այդ կեանքը: Իրանց երկրի
տնտեսական ծանր հանգամանքները հազարաւոր հայաս-
տանցիներին այսօր բերել գցել են հեռաւոր Ամերիկան,
որտեղ նրանք, ըստ մեծի մասին, մնում են միայն ժա-
մանակաւորապէս, կրկին հայրենիք վերադառնալու մտա-
դրութեամբ: Արդէն ինքն ըստ ինքեան հասկանալի է,
որ ամերիկական քաղաքական ու հասարակական կեանքն
ընդհանրապէս մի դպրոց է ամերիկաբնակ հայերի հա-
մար, եթէ միայն նրանք օաղիսի պէս չառանձնանան
սեփական անձուկ սահմաններում, այլ հետաքրքրվեն
այդ կեանքով, դիտեն, հետեւեն նրան: Հայ ժողովրդի
շահերը նրանց վրա պարտականութիւն են դնում, որ
օգտվելով իրանց Ամերիկայում ապրած ժամանակամիջո-
ցից, նրանք օգուտ բաղեն իրանց բանւորական վիճակից
եւ զինւորված ժամանակիս ճշմարիտ առաջադէմ, յեղա-
փոխիչ սկզբունքներով՝ անցնեն յեղափոխական ասպա-
րէզի վրա իրանց որոշ նպատակներով ու նպատակայար-
մար գործունէութեամբ:

Պէտք է ասել, որ ամերիկաբնակ հայերի մէջ առ-
հասարակ բաւական զարգացած է երեւում հայ ժողո-
վրդային գործին ծառայելու ձգտումը: Այսօր նրանց
մէջ նկատվում է մի ներքին գործունէութիւն եւ բա-
րոյական ու նիւթական եռանդուն աջակցութիւն յեղա-
փոխական գործող մարմիններին: Շնորհով յայտնի հան-
գամանքների՝ նրանք ձգտում են կազմակերպվել առան-
ձին խմբերով, իրար մէջ յարաբերութիւն գոյացնել եւ
կապվել գ ո Ր Ծ Ո Ղ գ Լ խ աւ ո Ր մարմին հետ: Այդ
խմբերին անհրաժեշտ է ունենալ իրանց ներքին կանո-
նադրը, ամենքի համար համատիպ, միեւնոյն սկզբունք-
ների վրա հաստատված, ինչ առաջնակարգ կարեւորու-
թիւն ունի յեղափոխութեան համար, ըստ որում դա
պայման է ոյժերի ընդհանուր գործակցութեան, նրանց
համախմբման եւ նրանց ձգտումներին մէկ ուղղութիւն
տալուն ու միանպատակ լինելուն: Եթէ ոյժերի այդ նա-
խապատրաստութիւնը կատարվէ որոշ ու նպատակայարմար
ուղղութեամբ, անցնելով գործի ասպարէզը՝ նրանք ար-
դէն ղեկավար կը լինեն իրանց գործունէութիւնը դիւրացը-
նող հարկաւոր ղեկերով եւ կը յայտնվեն դէպի նպա-
տակը տանող իսկական ուղիի վրա: Նպատակայարմար են

նաեւ շատ քաղաքներում տեղի ունեցող ամերիկաբնակ
հայերի յաճախակի գումարումները, ուր երբեմն ներկայ
է լինում մինչեւ երեք հարիւր ու աւելի հայ բազմու-
թիւն եւ ուր խօսում, վիճաբանում ու կարգում են
որպէս հայկական դատին վերաբերող հարցերի, նոյնպէս
ընդհանուր զարգացում տվող հասարակական նիւթերի
մասին: Պէտք է խոստովանվել սակայն, որ այդ բոլորը
կատարվում են շատ անգամ բաւական տարրական կեր-
պով եւ երբեմն՝ շնորհով պառակտող տարրերի՝ տեղի
են տալիս անօգուտ վիճաբանութիւնների: Եթէ իրանց
ժողովներում նիւթերի աջող ընտրութիւններ ու աջող
մեկնութիւններ լինեն, ի հարկէ, այն ժամանակ այդ
ժողովները կը հասնեն իրանց նպատակին եւ միշտ մե-
տաճութեան առարկայ կը տան ունկնդիրներին:

Երբէք այդ ժողովներին, նոյնպէս ամերիկաբնակ հա-
յերի գ ո Ր Ծ Ե Լ ու ձգտումներին պէտք է տալ որոշ ուղ-
ղութիւն՝ համապատասխան հայ ժողովրդային դատի ի-
մասուն: Այդպիսի ուղղութիւն տալու համար պէտք է իւ-
րացնել այն սկզբունքները, որոնց մասին խօսեցինք ներկայ
յօդուածում: Համապատասխան կերպով փոխադրված լի-
նելով հայկական հողի վրա՝ իր յաջորդական աստիճան-
ներով ու նպատակներով, այդ սկզբունքներն առաջնորդ
են հանդիսանում հայ առաջադէմ, ճշմարիտ յեղափոխա-
կանների գործունէութեան մէջ, որով եւ պատրաստում
են հայ աշխատաւոր ժողովրդի յաղթանակը:

ԱՎԵ — ԵԱՆՑՑ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկայ համարով «Հնչակը» ոտք է կոխում իր
գոյութեան վեցերորդ տարեշրջանը: Այս առիթով
հարկ ենք համարում յայտնել, որ Հնչ. Կուսակցութեան
նպատակը լինելով կարելիին չափ անարգել կերպով տա-
րածել հայերիս մէջ յեղափոխական գաղափարներ, «Հնչա-
կին» նշանակված է բաժանորդագին, այլ նա կրկին կը
շարունակվէ տարածվել նոյնպէս ձ Ր Ի, որպէս եղել է նա
գոյութեան հինգ տարւայ ընթացքում, միանգամայն վե-
րապահելով հայ հասարակութեան բարի ցոնկութեանն
ու նախաձեռնութեանը նիւթապէս օգնել հրատարակու-
թեանս:

* * *

Տեղի սղութեան պատճառով ներկայ համարում
չեն ղեկեղվում թիւրքաց Հայաստանից ստացված թըղ-
թակցութիւնները:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և
թղթադրամ գումարներ ուղարկել հետեւեալ հասցեով —
Athènes. (Grèce). — M. Beniard. Poste restante.
Իսկ դրամական մասն դատենք — mandat — ու-
ղարկել հետեւեալ հասցեով —
Eaux-Vives. (Suisse). — M. Daniel. Poste restante.

Աթէնք.

Հայկական ազատ տպարան.